ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ

«11» 06 2014թ. Թիվ 1/506Ա

Երևան

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## «ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎՎԿ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱԶԴԱԳԻՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ն 2014 թվականի մայիսի 29-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել 120,000 հատ, 10 000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 5 տարի շրջանառելիության ժամկետով, 12% տարեկան անվանական տոկոսադրույքով, արժեկտրոնների կիսամյակային վճարմամբ, ապահովված «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ կողմից «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ում ներդրված 3 000 000 ԱՄՆ դոլարի և 30 000 000 ՀՀ դրամի ավանդների գրավով արժեկտրոնային պարտատոմսերի ազդագրի գրանցման հայտ, ինչպես նաև համապատասխան ազդագիրը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով ազդագրի գրանցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը: 2014 թվականի հունիսի 2-ին «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ն ներկայացրել է ազդագրի լրացում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2014 թվականի հունիսի 11-ի թիվ 25 արձանագրություն)՝

**Որոշում եմ.**

1. Գրանցել «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված 120,000 հատ, 10 000 ՀՀ

դրամ անվանական արժեքով, 5 տարի շրջանառելիության ժամկետով, 12% տարեկան անվանական տոկոսադրույքով, արժեկտրոնների կիսամյակային վճարմամբ, ապահովված «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎԿԿ ՓԲԸ կողմից «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ում ներդրված 3 000 000 ԱՄՆ դոլարի և 30 000 000 ՀՀ դրամի ավանդների գրավով արժեկտրոնային պարտատոմսերի ազդագիրը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ /ՆԵՐՍԵՍ ԵՐԻՑՅԱՆ